ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1034-Ա « 28 » օգոստոսի 2025թ.

«ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետով.

1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնին՝ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի N 5100-Ա որոշման N 2 հավելվածը՝ 2025 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև հոկտեմբերի 13-ը ներառյալ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ում իրականացնել 2023-2025 թվականների համակարգի գնահատման աուդիտ:

2. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ում աուդիտ իրականացնելու նպատակով ընդգրկել աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի ժ/պ Ս. Թունյանին (խմբի ղեկավար), գլխավոր մասնագետներ Ա. Ավետիսյանին, Ս. Հարությունյանին, Ա. Շահբազյանին և գլխավոր մասնագետի ժ/պ Լ.Դանիելյանին:

3. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ